ԿԱՐԾԻՔ

Աստղիկ Յուրիկի Հովսեփյանի «Տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիները տարրական դպրոցում»

խորագրով ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Հայտնի է, որ ժամանակակից մանկավարժության առջև ծառացած կարևորագույն հիմնահարցերից է անձնակողմնորոշիչ, աշակերտակենտրոն ուսուցման իրականացման արդյունավետ ուղիների բացահայտումը, որի կարգավորման նպատակով արդի մանկավարժական գիտական մտքում առանձնահատուկ կարևորություն է տրվում նաև տարբերակված ուսուցման վերաբերյալ տեսագործնական նշանակություն ունեցող տարատեսակ հիմնահարցերին, որոնցից մեկին էլ նվիրված է ատենախոսի թեկնածուական թեզը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից, ներառում է աղյուսակներ, տրամագրեր, նկարներ:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, հստակ ձևակերպված են օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, առաջադրված խնդիրները, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Հեղինակը սեղմագրում ներկայացրել է ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը: Այդ առումով կառանձնացնենք մեր կողմից դիտարկվող ատենախոսության համար առանցքային և առավել արժեքավոր նշանակություն ունեցող որոշ կետեր.

1. Ատենախոսն աշխատանքի առաջին գլխում, գիտականորեն վերլուծելով տարբերված ուսուցմանն առնչվող տարատեսակ հասկացությունների

վերաբերյալ գիտնականների կողմից առաջադրվող բազմաբնույթ մոտեցումներն ու սահմանումները, բարձրաձայնում է մանկավարժների կողմից «տարբերակված ուսուցում» հասկացության սահմանման, ինչպես նաև դրա և «անհատականացված ուսուցում» հասկացությունների միջև առկա հստակ սահմանազծման ոչ միասնական մոտեցման խնդրի մասին: Արդյունքում ներկայացվում է որոշակի դիրքորոշում առկա իրադրության նկատմամբ և տրվում է «տարբերակված ուսուցում» հասկացության նոր սահմանում, որի հիման վրա ձևակերպվում են մնացյալ տեսական դրույթները:

2. Հեղինակը, գիտական շարադրմամբ, անդրադառնալով տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի առավելություններին, հատկապես շեշտադրում է դասագործընթացում սովորողների կողմից դասանյութի յուրացման, դրա գործնականում կիրառելու կարողությունների ձեռքբերման ձգտումների ու հմտությունների ձևավորման երեք (ցածր, միջին և բարձր) մակարդակ ապահովելու մասին: Վերջինս, անշուշտ, ի տարբերություն դաս-դասարանային համակարգում տվյալ բաղադրիչի առանձնահատկությունների, նպաստում է սովորողների որոշ անհատական առանձնահատկությունների հաշվառման գործընթացի բարելավմանը:

3. Ատենախոսի աշխատանքն առանձնանում է հատկապես գործնական հագեցվածությամբ: Հեղինակը, հիմք ընդունելով պետական չափորոշչային տարամակարդակ պահանջները, մշակել և ներկայացրել է 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարանների համար «Մաթեմատիկա», «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից տարամակարդակ գրավոր աշխատանքների ինքնատիպ նմուշ-օրինակներ, դրանց գնահատման հատուկ ձև, տարբերակված քարտային առաջադրանքների, «հայտորոշիչ թեստեր»-ի նմուշ-օրինակներ: Հատկանշական է այն, որ ատենախոսն այդ ամենը կիրառել է գործնականում և առանձնացրել դրանց գործածման մի շարք նրբություններ:

4. Հեղինակն առանձնանում է իր ստեղծագործական և նորարար մոտեցմամբ, ինչը փաստվում է նաև իր կողմից մշակված և կիրառված տարամակարդակ ուսուցողական և զարգացնող խաղերի առկայությամբ:
5. Ատենախոսությունն առավել ամբողջական է դարձնում ատենախոսի կողմից մշակված և տարրական դպրոցում ներդրված ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելը:

Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն և արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է: Այն գրված է գիտական պատշաճ մակարդակով:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են կատարած հետազոտության և ատենախոսության հիմնական դրույթներից: Դրանք արտացոլված են նաև ատենախոսի հրապարակումներում:

Նշվածի կողքին հարկ ենք համարում առանձնացնել որոշ դիտարկումներ.

1. Ատենախոսը տարանջատելով «տարբերակված ուսուցում» և «անհատականացված ուսուցում» հասկացությունները՝ «անհատականացված ուսուցման տեխնոլոգիա» հասկացությունը դիտարկում է որպես «տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի» դրսևորումներից մեկը: Ցանկալի կլիներ, որպեսզի առավել հստակ ներկայացվեր նշված չորս հասկացությունների վերաբերյալ հեղինակի դիրքորոշումը:
2. Աշխատանքում ատենախոսը բազմիցս անդրադառնում է տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի միջոցով ուսուցման գործընթացում յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունների հաշվառման դրույթին, ավելին, ատենախոսությունում դիտարկվում է «ուսուցման տարբերակված մոտեցման սկզբունք» հասկացությունը, որն ըստ ատենախոսի՝ ենթադրում է ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար: Հասկանալի չէ, թե

ըստ հեղինակի, որն է «տարբերակված մոտեցման սկզբունքի» և «անհատականացված մոտեցման սկզբունքի» տարբերությունը:

3. Շահեկան կլիներ, եթե աշխատանքում ներկայացվեր տարրական դպրոցում տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման առանցքային դժվարություններն ու խոչընդոտները (ինչպես օրինակ՝ հայտորոշման, վերահսկման, ստուգման, անհատական առանձնահատկությունների հաշվառման և այլ գործընթացների իրականացման վերաբերյալ), համապատասխանաբար մեկնաբանելով՝ հեղինակի կողմից մշակված և ներդրված մոտեցումների միջոցով դրանց հաղթահարման հնարավորություններն ու սահմանափակումները:
4. Ինչպես ատենախոսն է նշում, տարբերակված ուսուցման վերաբերյալ առկա են մի շարք տեսական և գործնական մոտեցումներ: Հետաքրքիր կլիներ համեմատական վերլուծությամբ ներկայացվեր դրանց և ատենախոսի մոտեցման առանձնահատկությունները:
5. Տեսականորեն հիմնավորված է, որ ընդհանուր ճակատի սկզբունքով կազմակերպված ուսուցման գործընթացում անհնար է լիարժեքորեն իրականացնել անհատական մոտեցման սկզբունքը: Ինչպե՞ս է դա առնչվում ատենախոսի մշակած և կիրառած եռամակարդակ մոդելին:
6. Սեղմագրում նշված գիտական հրապարակումների ցանկում 5 և 6 համարներում միևնույն հոդվածն է: Կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, որ ատենախոսի հոդվածների քանակը ընդամենը հինգն են: Սակայն ատենախոսության գրականության ցանկից երևում է, որ խոսքը վերաբերում է իսկապես երկու տարբեր հոդվածների: Ատենախոսը անհասկանալի պատճառով սեղմագրում հոդվածների տվյալները կրճատված է ներկայացրել:
7. Ատենախոսության մեջ օգտագործված գրականության ցանկում ներառված են մի շարք հեղինակների վաղեմի հոդվածները, չնայած՝ առկա են այդ հեղինակների ավելի թարմ աշխատություններ: (օրինակ,

համար 75-ը): Հարկ է, որ հատկապես երիտասարդ հետազոտողները ծանոթ լինեն թեմային առնչվող նոր աշխատություններին:

Մեր կողմից արված դիտողությունները բոլորովին չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Այն ավարտուն, ինքնուրույն հետազոտական աշխատանք է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աստղիկ Յուրիկի Հովսեփյանի «Տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիները տարրական դպրոցում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Ա. Մկրտչյան

Մ.Ա. Մկրտչյանի ստորագրությունը հաստատում եմ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մ. Իսպիրյան

10. 06. 2024 թ.